ՄԻ ԴՐՎԱԳ ՀԱՅ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Բանասիր. գիտ. դոկտոր Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հովհան Ավետարանչի առասպելախառն պատմության մեջ՝ Պրոխորոն (իմա՝ Պրոխորոս) գրքում, որ միջնադարում թարգմանվել է հայերեն, ըստ Ղևոնդ Ալիշանի հանդիպում է Առնակ անունով չար հոգեառը։ Կինոպաս անունով կախարդը պատմելով ասում է. «Առաքեմ Առնակ չար ի տուն՝ յորում է, և պահանջեմ զհոգի նորա ի նմանէ»։ Փոքր-ինչ հետո նույնը կրկնվում է դևի բերանով. «Առաքեմ Հրեշտակ չար, և պահանջեմ զոգի նորա ի նմանէ»։

Ալիշանը եզրակացնում է. «Եթե ուրիշ ավանդութենե ծագած չէ այս անունս (Առնակ—Ս. Հ.), որ լսվի հին Հայկազն նահապետաց մեջ այլ (նկատի ունի Մովսես Խորենացու հիշատակած հայոց նահապետների շարքը—Ս. Հ.), Կրողի պես առող նշանակե, և միևնույն կըլլան Առնակն և Կրողն կամ Գրողն և Հրեշտակն չար»[1]։ Ուրեմն, ըստ Ալիշանի, Առնակ, Գրող (Կրող) և չար հրեշտակ՝ հոմանիշ անուններ են և նշանակում են չար հոգեառ։

Առնակ անունը, ըստ Հր. Աճառյանի, ասորերեն harnāga — շնագայլ բառի հայացած ձևն է, փոխառված ասորերենից[2]։

Կինոպաս կախարդի անունը, որի ծառայության տակ է Առնակ չար հոգեառը, հունարեն κυνώπες-ն է, բաղադրված κυνο- շուն և ωπς- աչք բառերից, որ նշանակում է շնաչյա, շնահայաց, նաև՝ անամոթ, լիրբ, մի մակդիր, որով բնորոշվել են հունական վրեժխնդրության դիցուհիները՝ էրինները[3]։ Վերջիններս ստորգետնյա աստվածություններ էին, բնակվում էին Աիդի մահվան թագավորության մեջ, սարսափելի տեսքով պառավներ էին, հաճախ ծնունդ էին առնում գիշերից և երկիր էին բարձրանում վրեժխնդրություն, չարություն, խելացնորություն հարուցելու[4]։ Նրանք իրենց արտաքինով և արարքներով հիշեցնում էին հայոց գիշերամայրերին։

Պրոխորոն գրքում նկարագրված Կինոպաս վհուկը հավանաբար մեկն էր էրիններից, որի ծառայության տակ էր գտնվում Առնակ շնակերպ հոգեառը։ Կինոպաս (Կինոպիս)—շնաչյա, շնահայաց անվան իմաստը միանգամայն համախոս է նրան ենթակա Առնակ-շնագայլ չար հոգեառի, որի անվան իմաստն ու հիշատակը պահպանված է հայ ժողովրդական ավանդության մեջ։ Վանի, Բայազետի, Ալաշկերտի ժողովրդական պարսավանքի խոսքերում մայ-

---

1 Ղ. Ալիշան. Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց. Վենետիկ, 1895, էջ 227—228։

2 Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. 1, Երևան, 1971, էջ 261։ Աճառյանը harnāga անվան բացատրությունը բերում է Բրոկելմանի «Lexicon Syriacum» (Բեռլին, 1895) բառարանից. բառը վկայված է X դարի ասորերենի բառարաններից և XIII դարի ասորական գրականությունից։ Բառը իր բաղադրիչներով մեզ թվում է ոչ սեմական, այլ հնդեվրոպական՝ (h)arn+aga։ Arn- արմատով բազմաթիվ հնագույն տեղանուններ և անձնանուններ կան վկայված և՛ Հին Փոքր Ասիայում, և՛ Եվրոպայում (տե՛ս А. А. Гиндин. Язык древнейшего населения юга Балканского полуострова. М., 1964, с. 93—95)։ Ցավոք, arn-ը ցարդ չունի գիտականորեն վերջնական ու հուսալի ստուգաբանություն։ Իսկ āgā-ածանցը շատ բնորոշ է հնդիրանական լեզուներին (տե՛ս Գ. Ղափանցյան. Արա Գեղեցիկ պաշտամունքը. Երևան, 1944, էջ 31)։

3 Δ. Δημητράκου. μεγα λεξικόν της Ἑλληνικης Γλώσσης. Τομ 5, Ἀθῆναι, 1951, 4193.

4 Мифы народов мира. Т. II, М., 1982, с. 666—667.

բերը հաճախ իրենց չար զավակներին պարսավում էին «առնակա շուն», «առնակային երեխա», «առնակավոր», «առնակավոր շներ» կամ էլ «դժոխքի առնակավորներ»։

Շիրակում առկա է անգամ «էրեսդ առնակավոր շները լիզեն»[6] անեծքը, ուր փոխանունությամբ անիծվողին մահ է ցանկացվում՝ և այն ներկայացվում է առնակավոր շների (=չար հոգեառներ) կողմից դեմքը լիզելու առասպելական պատկերով։

Բանավոր ավանդության մեջ պահպանված այս վկայությունները մի կողմից հաստատում են միջնադարում հայոց մեջ Առնակ անունով հոգեառի հավատալիքի գոյությունը, մյուս կողմից հավաստում Առնակի չար հատկանիշը, նրա շնակերպ լինելը կամ շուն ուղեկիցներ ունենալու պարագան («առնակավոր շուն», առնակավոր շներ» դարձվածներում)։

Հունական առասպելաբանության մեջ ստորերկրյա աշխարհի հետ կապված Հեկաթե դիցուհին պատկերացվում էր սև շան կերպարանքով, որը այս ու այն աշխարհում իրենց հանգիստը չգտած մեռելների շնակերպ հոգիների ոհմակով շրջապատված, շրջում է գերեզմանոցների մերձակայքում և ահ ու սարսափ տարածում։ Ուելսում հավատում էին մահվան ոգու (Gwinn ab Nudd) գոյությանը, որին երկրի վրա ուղեկցում էին կատաղած շները[7]։ Հայոց մեջ, հավանաբար, նույն կերպ է պատկերացվել նաև Առնակ հոգեառը՝ թե՛ իբրև շնակերպ և թե՛ իբրև կատաղի շներով ուղեկցվող[8]։

Հոգեառի կամ անդրաշխարհում հոգիների ուղեկիցների շնակերպ պատկերացումը գալիս է հնից և առկա է հնդեվրոպական (և ոչ միայն հնդեվրոպական) մի շարք ավանդություններում[9]։ Հին հնդիկների հուղարկավորման մի օրհներգում, նվիրված մահվան թագավորության տիրակալ Յամային, հանդես են գալիս երկու քառաչքանի, լայնապինչ, խայտարղետ շներ, իբրև Յամայի պատգամաբերներ։ Նրանք վեդայական մի այլ հիմնում (VIII, 1, 9) կրում են Շյամա և Շարալա անունները։ Այդ զույգ շները հսկում են Յամայի ուղին. Յաման բնակվում է վերին երկնքում, ուր մեռածների հոգիները Յամայի հետ նստած են խնջույքի։ Յաման «մարդկանց մեջ փընտրում է նրանց, ովքեր պետք է իրեն պատկանեն և մահվան ճանապարհով նրանց տանում է իր տիրակալությունը»։ Այդ որոնումները նա կատարում է իր զույգ շների միջոցով, որոնք կոչվում են «կյանքի առևանդիչներ»։

---

5 Ազգագրական հանդես. գիրք XXVI. Թիֆլիս, 1915, էջ 56, նաև՝ իմ անձնական գրառումներից։

6 Ա. զ. Մ խ ի թ ա ր յ ա ն. Փշրանքներ Շիրակի ամբարներից.—Էմինյան ազգագրական ժողովածու, Ա, Մոսկվա—Ալեքսանդրապոլ, 1901, էջ 135։

7 Տե՛ս Б. А. Литвинский, А. В. Седов. Культы и ритуалы кушанской Бактрии. Погребальный обряд. М., 1984, с. 163.

8 Միջնադարից սերող և XIX դարում Վանում վիճակի երգի վերածված մի հայրենում պահպանվել է անգամ շնակերպ պառավի թևևս առավել հին ու ամբողջական նկարագիրը.

Քուն քնայ, վեր ելայ, /Թուխ ամպ մը կը ցոլեր.
Իմ եարն ինի քուն տեսայ, /Մարգրտի ծածկոցն էր վերէն։
—Եարի՛կ, վե՛ր իլի, վերև նստի՝ /Իմ սէր քու սէր մօտենայ.
Ձեռ վերո՛ւ, աստված կանչէ՛, /Շնգլխիկ պառվիկ վերուանայ,
Իմ սէր քու սէր մօտենայ, /Հարս, հան վիճակն ի բարին (Ս. Աբեղյան. Դուսանական ժողովրդական տաղեր. Երևան, 1940, էջ 288)։ «Շնգլխիկ պառվիկը» (=շնագլուխ պառավ) հնագույն պատկերացումն է, հավանաբար, կինոպաս—շնաչյա էրինների, որոնց կարևոր ֆունկցիաներից մեկն էլ կանանց կամ նրանց մայրական իրավունքի պահպանումն էր (տե՛ս Мифы народов мира. II, с. 667)։ Երգի հերոսուհին խնդրում է իր քնած սիրեկանին արթնանալ, աղաչել աստծուն, որ շնագլուխ պառավը (կնոջ վրիժառու պահապանը) մեջտեղից վերանա, որպեսզի իրենք կարողանան իրենց սերը վայելել։

9 Տե՛ս В. Миллер. Значение Собаки в мифологических верованиях. М., 1876, с. 12—13.

Հուղարկավորման հիշյալ հիմնում (Ռիգվեդա, X, 14, 10, 11) դիմում է արվում հանգուցյալի հոգուն.

Հետապի՛ր երկու ջան կողքով՝...
Քառաչքանիների, խայտաբղետների, ճշմարիտ ուղիով,
Եվ հասիր հայրերիդ, որոնց դյուրին է գտնել.
Նրանք զվարճանում են Յամայի հետ ընդհանուր խնջույքում։
Քո ղույդ շները, ո՞վ Յամա, պահապաններ են,
Քառաչքանի, ուղի պահպանող, մարդկանց հսկող.
Նրան նրանց հանձնիր, ո՞վ արքա,
Եվ նրան հաջողություն ու առողջություն տուր[10]։

Քանի որ Յաման և մեռելների հոգիները բնակվում են վերին երկնքում, ուստի պետք է ենթադրել, որ Յամայի պատգամաբեր շները երկնքից են իջնում երկիր, մարդկանց մեջ փնտրում մեռնողներին և նրանց հոգիները ուղեկցում Յամայի ճանապարհով դեպի երկինք։ Սա մոտավորապես նույնն է, ինչ, փոքր-ինչ հետո կտեսնենք, իրանական ավանդության մեջ երկնային շների պատկերացումը։

Առավել ուշագրավ է իրանական ավանդությունը, ուր պահպանվել են շան մասին թե՛ առասպելաբանական հավատալիքների և թե՛ մահվան ու թաղման ծիսական արարողությունների հետ կապված որոշակի տվյալներ։ Ըստ Ավեստայի՝ երկու շուն հսկում են Չինվաթի կամուրջը (հմմտ. հայկական Մազե կամուրջի հետ), որի վրայով անդրաշխարհ է անցնելու հանգուցյալի հոգին (Վիդեվդատ, 13, 9)։ Մեկ այլ հաղորդմամբ՝ երկու շուն ուղեկցում են երկնային կույսին, որը Չինվաթի կամուրջի մոտ դիմավորում է արդարների հոգիներին (Վիդեվդատ, 19, 30), իսկ Բունդահիշնայում (30, 1, 1) վկայվում է, որ Չինվաթի կամուրջի մոտ է գտնվում գերբնական շունը։ Իրանի արդի զրադաշտականների պատկերացմամբ Չինվաթի կամուրջի մոտ են հավաքվում չար ու բարի ոգիները՝ տիրելու հանգուցյալների հոգիներին։ Երկնային շները պաշտպանում են հոգիներին չար ոգիների հափշտակումից։ Նույն կերպ երկրային սովորական շները պահպանում են մարդկանց հոգիները երկրի վրա բնակվող չար ոգիներից։ Ով երկրի վրա բարիք է գործել շներին՝ համապատասխան հատուցումը նրանցից ստանում է անդրաշխարհում։

Իրավացիորեն նկատված է, որ իրանական առասպելաբանության մեջ շների նկատմամբ առկա է երկու ընկալում՝ Չինվաթի կամուրջը հսկող երկնային շների և մարդկանց պահպանող երկրային շների. վերջիններիս էլ մասնակից են դարձնում ծիսական որոշակի արարողությունների։ Նախ՝ Իրանի արդի զրադաշտականները, նախքան ուտելը, պարտավոր են ամենից առաջ շանը կերակրել, ընդ որում ընտիր ուտեստեղենով։ Իսկ ծիսական արարողությունների ժամանակ քուրմը կամ ծիսական մաքրության մեջ գտնվող ընտանիքի անդամներից որևէ մեկը շանը մատուցում է ծիսական կերակուր՝ ծիսական ամանով։ Ուշագրավը, սակայն, թաղման արարողությունների ժամանակ շանը հատկացվող դերն է։ Հնում զրադաշտականները հանգուցյալի հետ կատարում էին սագդիդ (շնադիտում) կոչված արարողությունը։ Քուրմը հանգուցյալի մոտ էր գալիս շան ուղեկցությամբ. հանգուցյալի կրծքին նախապես դնում էին երեք կտոր հաց, ապա շանը մոտեցնում ընդհուպ հանգուցյալին, շունը ուտում էր իրեն հատկացված հացի կտորները։ Սագդիդի արարողությունը կատարվում էր երեք անգամ. երկրորդ անգամ հանգուցյալին ցույց են տալիս շանը դիալվացումից և պատանքավորումից հետո, հանգուցյալի դեմքը բացելով, իսկ վերջին անգամ՝ դիակը պատգա-

10 Տե՛ս Ригведа. Избранные гимны, перевод, комментарий и вступит. статья Т. Я. Елизаренковой. М., 1972 (տե՛ս X, 14-րդ հիմնը, էջ 199 և մասնավորապես Տ. Ելիզարենկովայի ծանոթագրությունները, էջ 353—356).

բակի վրա դախմա (զրադաշտականների հանգստարան) ներս տանելուց առաջ։ Գրեթե միևնույն արարողությունը կատարում են նաև Հնդկաստանի կրակապաշտ պարսերը, միայն նրանք ընտրում են այնպիսի շուն, որի աչքերի տակ աչք հիշեցնող պուտեր կան. նման շանն անվանում են «չորսաչքանի» («չաթրուշաշմա», համա. վեդայական քառաչքանի շների հետ)։ Շան ծիսական կերակրումը շարունակվում էր նաև թաղումից հետո ևօրյա տարբեր արարողությունների ժամանակ[11]։

Ստրաբոնի վկայությամբ սոգդիացիք ու բակտրիացիք իրենց զառամյալներին ու հիվանդներին գցում էին հատուկ ընտրած շներին՝ հոշոտելու։ Այդ շներին նրանք անվանել են «գերեզմանափորներ»[12]։

Շների հետ կապված մահվան և թաղման ծիսական արարողությունների հետքերը պահպանվել են Միջին Ասիայի հին իրանական ցեղերի (բակտրիացիներ, սոգդիացիներ) մ. թ. ա. I հազարամյակի կեսերով թվագրվող թաղումներում։ Դրանք մեծ մասամբ առանձին թաղված շան գլուխներ են (հիմնականում ծիսական անոթների մեջ դրված) կամ էլ ամբողջական շներ։ Դամբարաններում զոհաբերված այլ կենդանիների ոսկորների հետ հայտնաբերվել են նաև շան ոսկորներ, երբեմն էլ մարդու ոսկորների կողքին՝ շան ծնոտ։ Իրավացիորեն նկատված է, որ շների նմանատիպ թաղումները ունեցել են զոհաբերական բնույթ[13]. այսինքն՝ շունը հնում եղել է ծիսական զոհաբերության կենդանի և հաճախ զոհաբերվել ու թաղվել է առանձին։

Թերևս ծիսական առանձին խումբ է կազմում տիրոջ (մարդու) հետ շուն կամ շներ թաղելու սովորույթը, որ առավել հաճախադեպ է Միջին Ասիայի սահմաններից դուրս և առկա է Մերձդնեպրյան, Ղրիմի և Թամանյան թերակղզու սկյութական թաղումներում, ինչպես նաև Նեապոլի սկյութական դամբարանում[14]։

Ծիսական այս զույգ սովորույթի (զոհաբերված շան գլխի առանձին թաղման և մարդու հետ շուն կամ զոհաբերված շան գլուխ թաղելու) հետքերը պահպանվել են նաև Հայկական լեռնաշխարհի հնագույն և անտիկ ժամանակաշրջանի մի քանի թաղումներում։ Մ. թ. ա. XIV—XIII դդ. թվագրվող Արթիկի դամբարանադաշտի № 100 դամբարանում սև, կոկափայլ խեցե մի թասում հայտնաբերվել է շան գանգ, առանց մարդկային կմախքի հետքերի[15]։

---

11 Տվյալները համապատասխան աղբյուրներով տե՛ս Б. А. Литвинский, А. В. Седов. Указ. соч., с. 165—167։ Ի դեպ արևելաիրանական լեզուներում շունը կոչվել է *kuti (համա. հայերենի տարբեր բարբառներում շանը կանչելու կամ դիմելու Քուցի կամ Քուչ փաղաքշական ձևերի հետ)։ Առավել ուշագրավը, սակայն, այն է, որ Ավեստայի լեզվում շունը կոչվում է spā(n)- կամ spānəm ձևերով (հին հնդկերենում *spaka), որը համեմատելի է հայերեն սպանանել (մեռցնել), սպանդ (մորթել, զոհաբերել) բառերի հետ։ Առասպելաիմաստաբանական և հնչյունաբանական առումով խիստ գայթակղիչ է հայերենի սպան- արմատը բխեցնել հին իրանական, գուցե և հնդիրանական spa(n)—շուն արմատից, սպան-անել, նախնական առումով իբրև շանը հանձնել, առասպելաիմաստաբանական այն նույն հիմունքով, ինչ տեսանք վերևում, մանավանդ, որ ավեստերենում՝ *spāna վերակազմված ձևը նշանակել է սպանություն (համա. Հր. Աճառյան. Հայերենի արմատական բառարան. հ. 4, Երևան, 1979, էջ 259 և հտ.։ Э. Г. Туманян. Структура индоевропейских имен в армянском языке. М., 1978, с. 214, 216; Б. А. Литвинский, А. В. Седов. Указ. соч., с. 165)։

12 Տվյալները տե՛ս Գ. Տեր-Պողոսյան. Նախնի հայոց հոգեպաշտական շրջանից.— Հուշարձան, գրական ժողովածու. Վիեննա, 1911, էջ 236։

13 Տե՛ս Б. А. Литвинский, А. В. Седов. Указ. соч., с. 161—162.

14 Նույն տեղում, էջ 162։

15 Т. С. Хачатрян. Артикский некрополь. Каталог. Ереван, 1979, с. 7, 14, 34, 153 (П—100). Ի դեպ, այս թաղումն անհամեմատ ավելի վաղ է, քան մինչև այժմ Միջին Ասիայում և Անդրկովկասում վկայվածները։ Միջին Ասիայում ամենավաղը թվագրվում է մ. թ. ա. I հազարամյակի կեսերով, իսկ Վրաստանում (Ղլթեէթիում և Սամթավրոյում) հայտ-

Իսկ Շիրակավանի մ. թ. ա. II—մ. թ. I—II դդ. թվագրվող դամբարաններում հայտնաբերվել են շան կամ շներով թաղման մի քանի դեպքեր։ Դամբարաններից մեկը կարասային թաղում է շան կմախքով, երկուսում՝ մարդու կողքին թաղված է մեկ կամ երկու շուն, իսկ մեկում՝ մարդու գլխի տակ թաղված է շան գլուխ[16]։

Շան կամ շներով թաղման հնագիտական այս վկայություններն, անշուշտ, համախոս են հին հնդկական և իրանական վերոբերյալ հավատալիքներին ու ծիսական արարողություններին, հետևաբար ենթադրում են դրանց մեկ ընդհանուր, թերևս վաղ հնդեվրոպական միասնական ակունքից սերելու հավանականությունը։ Վերջինս հավաստվում է հեթիթական ավանդության մեջ թագավորի և թագուհու՝ աստվածներին մարդու (ռազմագերի) հետ շուն կամ շան լակոտ զոհաբերելու ծիսական արարողությամբ, որի առավել ուշ դուգահեռներն են հռոմեական լուպերկալիա (գայլարգելում) կոչված ծեսը՝ շան զոհաբերությամբ, և հին գերմանական Օդհին-Վոտան ռազմի աստծուն՝ մարդկանց հետ շուն կամ գայլ զոհաբերելու ծիսական սովորույթը։ Օդհինն ինքը, հնդկական Յամայի նման, պատկերացվում էր զույգ գայլերի (Geri և Freki) ՝ իբրև նրա հավատարիմ շների ուղեկցությամբ։ Օդհինի գինվորները կոչվում էին «գայլեր» կամ «շներ»։ Շան զոհաբերության ծիսական սովորույթը տարածված է եղել հին Փոքր Ասիայում (Ալաչա Հույուք և այլուր)[17]։

Շան թաղման վերոհիշյալ երկու դեպքերը, կարծում ենք, թե՛ ժամանակագրորեն և թե՛ ծիսահավատալիքային առումով տարբերվում են միմյանցից, թեպետ հետագայում երկու ձևերն էլ միախառնվել են և դարձել համաժամանակյա։ Նախնականն, ըստ երևույթին, զոհաբերված շների թաղումներն են, որոնց արձագանքը գտնում ենք հեթիթական գրավոր ավանդության մեջ, իսկ բուն առարկայական վկայությունները՝ մ. թ. ա. II հազարամյակի երկրորդ կեսով թվագրվող Արթիկի և առավել ուշ շրջանի միջինասիական այն թաղումներում, ուր գլխատված-զոհաբերված շան գլուխները կամ ծնոտները թաղվել են առանձին դամբարաններում՝ ծիսական անոթների մեջ կամ դրանցից դուրս։

Որ շան զոհաբերությունը առանձին ծիսակարգի արդյունք է և սկզբնապես կապ չի ունեցել մեռելների թաղման արարողության հետ՝ երևում է և՛ հեթիթական ավանդությունից, և՛ հռոմեական լուպերկալիա ծեսի տրվյալներից։ Ըստ երևույթին այլ է եղել նաև այդ ծիսական արարողության հավատալիքային հիմքը։ Այդ ծեսի հավանական հետնագույն արձագանքներից են վախի դեմ ուղղված կամ էլ շան հարձակումից զերծ պահելու համար ասվող հայկական հմայական աղոթքի հետևյալ բանաձևերը.

Մե շունրմ կէր, պերան չկէր,
Աստվածամոր որդի մը կէր,
Կալեր, կապեր, վեր մի ձիղեր[18],
Քրիստոսն Լկավ աշխարհ՝ շանը անգլուխ տեսավ[19]։

Նարբված չորս դեպքերը թվագրվում են մ. թ. I—III դդ. (տե՛ս Б. А. Литвинский, А. В. Седов. Указ. соч., с. 161—162)։

16 Տվյալները սիրով մեզ հաղորդեց Շիրակավանի արշավախմբի պետ, հնագետ Ֆ. Տեր-Մարտիրոսովը։

17 Մանրամասները համապատասխան գրականությամբ և աղբյուրներով տե՛ս В. В. Иванов. Древнебалканский и общеиндоевропейский текст мифа о герое убийце пса и евразийские параллели —Славянское и балканское языкознание. М., 1977, с. 188—199.

18 Ազգագրական հանդես. գիրք XXVI, Թիֆլիս, 1916, էջ 202։

19 Բանահավաք Կ. Սահակյանի գրառումներից, Լենինականի «Կոմայրի» արգելոց թանգարան։

Անգլուխ կամ անբերան շան այս պատկերն, անշուշտ, հնից է գալիս, ըստ երևույթին՝ զոհաբերված-գլխատված շան պատկերացումից և խորհրդանշում է վախազերծման գաղափարը։

«Ահ ու երկյուղը» (ահ ու սարսափ) կամ «ահ ու դողը» հին հեթիթական և հունական ավանդություններում հանդես են գալիս իբրև անձնավորված աստվածություններ կամ ոգիներ, կապված արեգակնային աստվածության հետ, որոնց դեմ կիրառվել են հմայական հատուկ բանաձևեր[20]։ Բացառված չէ, որ շան զոհաբերումը (հմմտ. հայերեն սպանդ—զոհաբերում, սպանում, ավեստ. spā(n)- շուն, spanā- սպանություն) կապված լինի կյանքին սպառնացող մահվան ու սարսափի վերացման հետ (հմմտ. արևկյանք խորհրդանիշը արևի աստծուն ուղեկցող ահ ու սարսափի հին հեթիթական և հունական պատկերացումների հետ)։

Այս հիմունքով ենթադրելի է հնարավորությունն այն իրողության, որ շան, իբրև հոգեառի և մահվան անձնավորման, զոհաբերության հետ կապվեր մահվան ահ ու սարսափի սպառնալիքի վերացումը։ Այս ենթադրության օգտին են խոսում հայ և իրանական ուշ շրջանի ավանդության մեջ ոռնացող շներին հալածելու կամ ծեծելու սովորույթը։ Երբ շունը երկինք նայելով սկսում էր ոռնալ, հավատում էին, թե տանեցիներից մեկը կմեռնի՝ կամ շունը հոգեառին է տեսել, որը գալիս է տանտիրոջ հոգին առնելու կամ էլ տանը որևէ դժբախտություն կարող է պատահել։ Տաջիկները հավատում էին անգամ, թե շունը, կանխազգալով տան վրա գալիք դժբախտությունը, ոռնոցով դիմում է աստծուն, որ այդ դժբախտությունն իրեն փոխանցի, այսինքն՝ ինքը մեռնա։ Շան ոռնալը համարվում էր մահվան նախանշան և մարդկանց համակում մոտալուտ մահվան ահ ու սարսափով։ Ուստի ոռնացող շանը ծեծում էին, հալածում, հայհոյում, իսկ տաջիկները փայտով խփում էին ոռնացող շան բերանին, հետո էլ մի ամբողջ հաց տալիս նրան[21]։ Սա փաստորեն պայքար էր մահվան մոտալուտ ահ ու սարսափը մարմնավորող ոռնացող շան դեմ՝ մոտեցող մահը կանխելու համար, որ հնում կարող էր ավարտվել շան զոհաբերությամբ։

Շան զոհաբերության մեկ այլ հետևյալ արտահայտություն է հայոց մեջ պահպանված հետևյալ սովորույթը. Բուլանըխում, երբ կատաղած շունը մարդ էր կծում, բռնում էին կծող շանը, երկու կես անում և կծած մարդուն շան մարմնի երկու մասի մեջտեղից անցկացնում[22]։ Հմմտ. մեռելներին թաղելիս շանը մեջտեղից կիսելու հին սկանդինավցիների սովորույթի հետ[23]։ Շանը երկատելու և մեջտեղից անցնելու ծիսական այս սովորույթը վկայված է թե՛ հունամակեդոնական և թե՛ հարավ-արևելյան ու հյուսիս-արևելյան աֆրիկյան ցեղերի ավանդության մեջ։ Երկատված շան մեջտեղից անցնելու արարողությունը, մասնագետների կարծիքով (Ռոբերտսոն Սմիթ, Ջեյմս Ֆրեյզեր), հետապնդել է ծիսական հանդիսավոր մաքրագործման կամ առավել որոշակի՝ պահպանության նպատակներ[24]։

Բացի այդ, հին ավանդությունից են, հավանաբար, սերում տարբեր լեզուներում գործածվող «ահա թե որտեղ է թաղված շան գլուխը», «вот где зарыта собака» ասույթները, որոնք թեպետ վերածվել են փոխաբերական դարձվածների, բայց իրենց բուն իմաստով առնչվում են շան զոհաբերման ու թաղման ծիսական հնագույն սովորույթի հետ։ Հիշյալ դարձվածներն ասվում են որևէ բանի, գաղտնիքի, մտքի էությունը, պատճառը հայտնա-

---

20 Տե՛ս В. В. Иванов. Чатал-Гююк и Балканы. Проблемы этнических связей и культурных контактов.—Balcanica, Лингвистические исследования. М., 1979, с. 15—17.

21 Տե՛ս Ազգագրական հանդես. Ա գիրք, Շուշի, 1895/96, էջ 358։ Б. А. Литвинский, А. В. Седов. Указ. соч., с. 163.

22 Ազգագրական հանդես. Զ գիրք, Թիֆլիս, 1900, էջ 51։

23 Б. А. Литвинский, А. В. Седов. Указ. соч., с. 163—164.

24 Джеймс Фрэзер. Фольклор в Ветхом завете. М., 1985, с. 182—184.

բերելու կամ բացահայտելու առիթով, հետևաբար և ուղղակի իմաստով ակնարկում են այն իրողությունը, որ հնում շան կամ նրա գլխի թաղումը եղել է ծիսական գաղտնի արարողություն. ըստ երևույթին զոհաբերված շան թաղումը կատարվել է զոհաբերման արարողության մասնակիցներից գաղտնի, իբրև տաբուավորված ծիսահմայական գործողություն։ Իսկ այն դեպքերը, ուր շունը կամ շները թաղված են մարդու հետ միասին, երևան են գալիս համեմատաբար ուշ անտիկ ժամանակաշրջանում և առնչվում են մարդու թաղման ծիսական արարողություններին՝ առասպելաբանական այլ հավատալիքների հիման վրա։ Մարդկանց հետ շուն կամ շներ թաղելու ծիսական սովորույթն աներկբայորեն հավաստում է հնդիրանական և վաղ հայկական առասպելաբանական պատկերացումները շան, իբրև անդրաշխարհում հոգիների ուղեկցի, հոգիների պահապանի, հոգետարի հավատալիքի գոյությունը։ Իսկ ուշ շրջանի այն թաղումները, ուր մարդու կողքին կամ գլխատակին հանդիպում են զոհաբերված շան կամ շների գլուխներ, վկայում են այն մասին, որ շան առանձին զոհաբերման հնագույն սովորույթը հետագայում կապվել է թաղման ծիսական արարողությունների հետ և ըստ այդմ նոր իմաստավորում ստացել։ Այդ առումով ուշագրավ է մեռելների հետ շուն զոհաբերելու հին սկանդինավների սովորույթը, որ հատկապես ի հայտ է եկել վիկինգների պեղված դամբարաններում թաղման նավակների մեջ շան կամ մի քանի շների, հաճախ անգլուխ կմախքների, առկայությամբ[25]։

Շան, իբրև մահվան թագավորության պահապանի, հոգեառ-հոգետարի կամ հոգիների առաջնորդ-ուղեկցի առասպելաբանական ընկալումն ու պատկերացումը հայ հին ու նոր բանավոր ավանդության մեջ ունեցել է և ունի իր տարբեր դրսևորումները։ Մեկը վերևում արդեն քննված Առնակ շնակերպ հոգեառն է կամ գուցե նրա «առնակավոր շուն» կոչված ուղեկից-օգնականներն են։ Մյուսը՝ հայոց հին ավանդության մեջ Մասիսի վիհում բանտարկված Արտավազդի շղթաները լիզող (կրծող) շներն են և Արային լիզելով հարություն տվող շնակերպ կամ շնածին առլեզ-արալեզ-յարալեզները։ Ըստ Եղնիկի՝ «Զառլեզն ի շանէ, զոր արալեզն կոչեն»[26]։ Մասիսի վիհում արկելափակված (իմա՝ թաղված) Արտավազդի շղթաները լիզող շները ու Արային լիզող արալեզները միևնույն նպատակն են հետապնդում՝ ի արտահայտություն մահվան կապանքներից ազատ արձակելու, հարություն տալու գաղափարի[27]։ Նշանակում է՝ շան առասպելաբանական կեր-

25 Տե՛ս Б. А. Литвинский, А. В. Седов. Указ. соч., с. 163—164.

26 Եղնիկ Կողբացի. Եղծ աղանդոց. Թիֆլիս, 1914, Ա, իդ, էջ 69—70։

27 Դեռևս միջնադարում Վանական Վարդապետն էր նշում Արտավազդի շղթաները լիզող շների և յարալեզների ընդհանրությունը՝ գրելով. «Եւ երկու շունք սեավ և սպիտակ՝ յար լեզուն դկապանս նորա (Արտավազդի—Ս. Հ.)։ Այս է Յարալէզ առասպելն որ ասեն, թէ երկաթի կապանքն տէրէմտին (իմա՝ տարեմտին) ի մաղն եկած լինի. եւ թէ կտրի՝ արտաքս ելանէ զաշխարհս» (ընդգծումներն իմն են—Ս. Հ.) (Гр. Халатянц. Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского. Ч. II. Материалы. М., 1896, с. 75)։ Թեպետ Վանական Վարդապետը Յարալէզ անունը ժողովրդական ստուգաբանությամբ բխեցնում է «յար լեզուն» մակդիրավոր բայից. բայց իր խոսքի շարունակության մեջ («...թէ երկաթի կապանքն տէրէմտին ի մաղն եկած լինի և թէ կտրի՝ արտաքս ելանէ զաշխարհս») ակնարկում է Արտավազդի շղթաները լիզող շների և յարալեզների ֆունկցիոնալ ընդհանրությունը, իբրև հարություն տվող էակների։ Նկատենք նաև հետևյալը. թե՛ Վանական Վարդապետի և թե՛ միջնադարյան երկու այլ աղբյուրներում՝ Կիրակոս Արևելցու և Գրիգոր Խլաթեցու մոտ Արտավազդի շղթաները լիզող շներից մեկը սև է, մյուսը՝ սպիտակ։ Շների այս տարագույն սիմվոլիկան խորհրդանշում է շների առասպելաբանական երկվական բնույթը. սև շունը խորհրդանշում է կապը «Սև ու մութ աշխարհի», այն է՝ մահվան թագավորության հետ (որի մեջ է գտնվում Արտավազդը), իսկ սպիտակ շունը սիմվոլացնում է կապը «լույս աշխարհի», այն է՝ կյանքի հետ, այսինքն՝ հարության, որին ձգտում էր Արտավազդը և նրա կապանքները լիզող Սպիտակ շունը։ Սա մեր առասպելաբանության մեջ շների երկվական ֆունկցիայի ցայտուն արտահայտություններից մեկն է, որ ստորև կտեսնենք այլ օրինակներով ևս։

պարն ընդհանրապես կապված լինելով մահվան թագավորության պատկերացման հետ, երկփեղկվում է. մի կողմից շունը մահվան թագավորության տիրակալի կամ աստծու առաքյալն է, հոգեառ-հոգետարը. մյուս կողմից՝ մեռածներին կյանք ու հարություն պարգևող։ Հիշենք թեկուզ տարբեր ավանդություններում առկա մանուկ հերոսի կամ արքայազնի սնումն ու հովանավորումը շան կամ գայլի կողմից (Ռեմոս և Ռոմուլոս, Կյուրոս Մեծ, Սանասարուկ), որ դարձյալ զուգամիտվում է կյանքի ու հարության գաղափարին[28]։

Վեդայական ավանդության մեջ տեսանք, որ Յամայի քառաչքանի շները վերևից՝ երկնքից են իջնում երկիր և պահպանում Յամայի ուղին։ Արալեզները ևս հին հայոց ավանդությամբ վերևից՝ երկնքից են իջնում (հմմտ. Մովսես Խորենացու վկայությունը. «Եւ հրամայէ (Շամիրամ) դնել զնա (Արայի դիակը) ի վերնատան ապարանիցն»[29]. Փավստոս Բուզանդի վկայությունը՝ Մուշեղ Մամիկոնյանի դիակը «հանին եդին ի տանիսն աշտարակի միոյ, ասէին՝ թէ վասն զի այր քաջ էր **Առլէզք իջանեն և յարուցանեն զդա**»[30]. ընդգծումն իմն է—Ս. Հ.)։ Դարձյալ հայոց ավանդությամբ երկնքից է, ըստ երևույթին, իջել ձնաբուքին Կորդվաց լեռներում մոլորված մանուկ Սանասարուկին և նրա դայակին օգնության հասած և երեխային պահպանած շունը՝ «կենդանի իմն նորահրաշ սպիտակ յաստուածոցն առաքեալ»[31]։ Հիշարժան է նաև հայոց մեջ առաջին թխած հացը շանը տալու սովորույթի պատճառական զրույցը։ Ըստ այդմ՝ աշխարհում դեռ հաց չի եղել, շունը երկինք նայելով՝ քաղցից այնքան է ոռնացել, որ երկնքից հատիկ է ընկել երկիր, ծլել և այնուհետև երկիրը լցվել է հացով։ Դրա համար էլ առաջին թխած հացը շանն են տալիս, քանզի հացը շան ոռնոցով է աշխարհ եկել[32]։ Այստեղ ուշագրավն այն է, որ շունը դարձյալ հարաբերության մեջ է դրված երկնքի հետ, դարձել է միջնորդ երկնքի ու երկրի՝ հանուն մարդու կեցության միջոցի ապահովման[33]։

Հիշենք, որ շունը հացահատիկի ձեռքբերման ու աճեցման իր այս դերով առնչվում է Արա Գեղեցիկին, իբրև հացաբույսերի հատիկային աստվածության, որի ծլարձակման կամ հարության հատկանիշը դարձյալ աղերսվում է շնակերպ արալեզներին։ Այս զրույցը փաստորեն պատկանում է հատիկային մեռնող-հառնող աստվածության հնամենի առասպելների շարքին, ուր թեպետ բացակայում է հացահատիկի անձնավորումը, սակայն բուն իմաստով («Հացը=հատիկը շան ոռնոցով է եկել աշխարհ» ասույթը) վկայում է շան՝ հացահատիկի հարուցիչ լինելու հնօրյա գաղափարը, որ գտնում ենք թե՛ Օզիրիսի (հացահատիկի մարմնավորում) հարությանը նպաս-

---

28 Շան մեռելահարույց հատկանիշը արտահայտվել է նաև հին եգիպտական ավանդության մեջ։ Օզիրիսի և Իզիդայի առասպելում շունը (Անուբիս) օգնում է Իզիդային՝ Օզիրիսի մարմնի մասերը միմյանց կցելու, որպեսզի նա վերակենդանանա (տե՛ս Գ ր. Ղ ա փ ա ն ց յ ա ն. Արա Գեղեցկի պաշտամունքը. Երևան, 1944, էջ 32, նաև Мифы народов мира. Т. I, М., 1980, с. 89)։

29 Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի. Պատմութիւն Հայոց. Ա, գլ. ԺԵ։

30 Փ ա վ ս տ ո ս Բ ու զ ա ն դ. Պատմութիւն Հայոց. V դպր., գ. ԼԶ։

31 Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, Բ, գլ. ԼԶ։

32 Իմ գրառումներից։ Տե՛ս նաև Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Ավանդապատում. Երևան, 1969, էջ 403։

33 Մարդկանց անմահություն պարգևելու խնդրում երկնքի ու մարդկանց միջև շան միջնորդ լինելու մասին զրույցներ կան նաև աֆրիկյան առասպելաբանության մեջ (հմմտ. Д ж. Ф р э з е р. Указ. соч., с. 36, 39)։ Երկնքի հետ շան հարաբերվելու հարցում թերևս պատահական չէ նրա «աստեղային կոչը» (Լևի Ստրոսի արտահայտությամբ)՝ Շնիկ (Սիրիուս) աստղի Շնաստղ անունը (Ղ. Ա լ ի շ ա ն. Հին հավատք, էջ 125։ Հնդեվրոպական զուգահեռները տե՛ս В. В. И в а н о в. Древнебалканский и общеиндоевропейский текст мифа..., с. 207—208)։

տող Իդիղայի օգնական Անուրիս շան և թե՛ Շամիրամի՝ արալեզների օգնությամբ Արային հարություն տալու առասպելաբանական պատկերացումներում։

Շան այս երկակի առասպելաբանական ֆունկցիան՝ մերթ իբրև հոգեառ, հոգեկիր, հոգիների առաջնորդ, կապված մահվան թագավորության՝ ստորերկրյա աշխարհի հետ, մերթ իբրև երկնքից իջնող, կռվում ընկած դյուցազներին լիզող՝ հարություն տվող կամ արքայազներին սնուցող ու հովանավորող կամ էլ մարդկանց՝ երկնքի միջոցով ապրուստի միջոցներով ապահովող (իմա՝ կյանք պարգևող), վկայում է շան առասպելաբանական կերպարի միջնորդային դերը երկնքի, երկրի և ստորերկրայքի, կյանքի ու մահվան, այսրաշխարհի և անդրաշխարհի միջև։ Նա և՛ մահացնող է, և՛ հարուցող՝ հարություն տվող, կյանք պարգևող[34]։

Եվ շան պաշտամունքի այս երկակի բնույթով էլ պետք է մեկնաբանել դամբարաններում շներ թաղելու ծիսական սովորույթը, որպես արտահայտություն ստորերկրյա աշխարհում շան՝ իբրև հոգիների և՛ ուղեկից-առաջնորդի, և՛ մեռելներին հարություն տվողի։

Մխիթար Գոշի վկայությամբ միջնադարյան Հայաստանում երդման ուրացության ձևի մեջ են մտել շան պոչը բռնելով («զշան ղձետոյ ունել») կամ ձեռը ոսկոր առնելով («Ոսկր ի ձեռն առնուլ») երդվելը, որ, ինչպես իրավացիորեն գտնում են, նշանակում է «անդրշիրիմյան կյանքի սպառնալիքն ընդունել», այսինքն՝ իր հոգին շանը հանձնել, այլ կերպ ասած՝ մեռնել, եթե իր ասածը ճիշտ չէ[35]։ Այդ են վկայում հայոց բանավոր ավանդության մեջ ցարդ գոյատևող «շան հոգի», «հոգիդ շներուն տամ», «հոգիդ շուն դառնա», «շան փայ ու բաժին էղնիս», «շներոց էղնիս», «շան օրոգայթ» անեծք-պարսավանքները (հմմտ. զուգահեռ ձևերը՝ «սատանի հոգի», «դիվու հոգի», «սատանի փայ», «սատանի բաժին», «դժոխքի բաժին», «սատանոց էղնիս», «սատանի օրոգայթ» և այլն[36]), որոնց մեջ նկատի է առնվել շան ոչ թե իրականաօրեական, այլ առասպելաբանական ընկալումը, իբրև մահվան շար ոգու, հոգեառ-հոգետարի հավատալիքն ու պատկերացումը՝ վերածված դրանց նախնական իմաստը հաճախ ասացողների կողմից այլևս չգիտակցվող լեզվադարձվածային կաղապարների։

---

34 Ի դեպ, մոտավորապես նման մի եզրակացության է հանգել նաև Բ. Շլերաթը իր „Der Hund bei den Indogermanen" աշխատության մեջ։ Ավելորդ չէ առաջ բերել Շլերաթի այդ կարծիքը ըստ մեր օգտագործած աղբյուրի. «Շան սերտ կապը» հնդեվրոպացիների «Մեղման արարողության հետ» անվիճելի է։ Նունը առասպելաբանության մեջ գտնվում է «կյանքի ու մահվան, այս և այն աշխարհի, մարմնականի և հոգևորի միջև։ Նա հանդես է դալիս իբրև միայնակ և զույգ, սև ու սպիտակ, արև ու լուսին» (В. А. Литвинский, А. В. Седов. Указ. соч., с. 163)։ Շլերաթի այս եզրահանգման միանգամայն արդարացի հիմունքներից մեկն էլ հավատալիքային հետևյալ իրողությունն է, որ առկա է հնդեվրոպացիների, ինչպես ինքն է նշում՝ բրետոնցիների, ուելսցիների, իռլանդացիների և հայերի պատկերացումներում։ Ըստ այդմ՝ մեռելների չհանգստացող (ավելացնենք՝ այլադավանների, մեղսագործների, չծվածների—Ս. Հ.) հոգիները չեն ընկնում անդրաշխարհ, այլ հաճախ շան կերպարանքով մնում են այս ու այն աշխարհի միջև, աղջամուղջին կամ լուսնյակ գիշերները ճանապարհների խաչմերուկներում (ավելացնենք նաև՝ գերեզմանոցների կողքին—Ս. Հ.) միջանցիկ աշխարհից հանկարծ դուրս են գալիս երկիր և այս կամ այն կերպ ներգործում մարդկանց վրա, հաճախ վախեցնում նրանց (տե՛ս Б. А. Литвинский, А. В. Седов. Указ. соч., с. 162—163. Հմմտ. Մ. Արեղյան. Երկեր. հ. է, Երևան, 1975, էջ 17—18։ Мифы народов мира. Т. I, с. 316 «Горнапштикнер» հոդվածը)։ Ուրվականների կամ գոռնափշտիկների շնակերպ պատկերացումների արտահայտություններից են «հոգիդ շուն դառնա» կամ «շնե հոդի» հայկական անեծքները (մեր գրառումներից)։

35 Գր. Տեր-Պողոսյան. Նախնի հայոց հոգեպաշտության շրջանից, էջ 236։ Ա. Ղ. Մատիկյան. Նունը դիցաբանության մեջ.—«Հանդես ամսօրյա», Վիեննա, 1926, էջ 160։

36 Իմ անձնական գրառումներից։

Այսպես, տեսնում ենք, որ հայոց մահվան առասպելաբանական պատկերացումներում ու հավատալիքներում առկա են շան կերպարի ու գործելակերպի զրեթե նույն ընկալումները, ինչ հնդիրանական և արևմտաեվրոպական ժողովուրդների համանման պատկերացումներում։

Հոգեառի նաև հոգետարի հին պատկերացումներից մեկը եղել է շնակերպ, որ երևան է գալիս Առնակ հոգեառի ինչպես ստուգաբանական իմաստի (շնագայլ), այնպես էլ «առնակավոր շուն», «առնակային շներ» կամ «դժոխքի առնակավորներ» դարձվածներում։ Վերջինս զուգամիտվում է հին անգլիական գրավոր ավանդության մեջ պահպանված Օդհինին ուղեկցող գայլերին տրվող hellehundes—դժոխքի շներ անվանմանը[37]։ Այս հավատալիքն ու պատկերացումը իմաստավորվում, խորանում և ընդլայնվում են հնդիրանական, մասամբ և արևմտահնդեվրոպական, համապատասխան հավատալիքներին զուգորդելիս, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում վերակազմել հին հայոց մահվան առասպելաբանական ընկալումների մեջ շան ունեցած դերի առավել լրիվ ու ամբողջական պատկերը։ Դրան մեծապես նպաստելու են դալիս հին Փոքր Ասիայում, այդ թվում Հայկական լեռնաշխարհում, Կովկասում, Միջին Ասիայում և Սկանդինավիայում հայտնաբերված հնդեվրոպական ցեղերի շան զոհաբերության և շներով թաղման հնագիտական, մասամբ և գրավոր տվյալները, որոնք վկայում են հին հնդեվրոպացիների մահվան և թաղման ծիսակարգում ու առասպելաբանական հավատալիքներում շան ունեցած դերի և նշանակության մասին։ Մյուս կողմից շան նկատմամբ եղած հին հայկական հավատալիքները վկայում են, որ շներին կամ շնակերպ էակներին (Արտավազդի շներին, արալեղներին) վերագրվել է նաև մեռելներին հարություն տալու հատկանիշ, երկնքի, երկրի և ստորերկրյա աշխարհի միջև միջնորդի դեր, անգամ մարգկանց հացով ապահովելու կուլտուրակետ ֆունեցիա, որ գարձյալ առնչվում է Արալի, իրրև հասիկային աստվածության հարության գաղափարի հետ։

СТРАНИЦА ИЗ АРМЯНСКОЙ МИФОЛОГИИ

Доктор филол. наук С. Б. АРУТЮНЯН

Резюме

В статье на основе фольклорно-этнографических и археологических сравнительных материалов реконструируется функция собаки в ритуально-мифологических представлениях древних армян. В них собаки выступают в двойной мифологической функции: как отнимающие и сопровождающие души умерших в подземелье (царство мертвых), иногда и воплощающие саму душу мертвеца, а также как спускающиеся с небес духи, воскресающие погибших героев; или же как покровители малолетних царевичей и с помощью неба обеспечивающие людей жизненным благом—хлебом. Эта двойственность определяет и медиативный характер собаки как посредника между тремя частями мироздания—небом, землей и подземельем, что выражается также и в соответствующей цветовой символике (черная и белая собаки, грызущие цепи Артавазда в подземелье), что в основном идентично общеиндоевропейским мифологическим представлениям о собаке.

---

37 Տե՛ս Б. А. Литвинский, А. В. Седов. Указ. соч., с. 164.